

Ի՞նչ կը նշանակէ

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԵՐԿԻՆՔԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1. Աստուծոյ Թագաւորութիւնը Հակընդդէմ Մարդկային Իշխանութեան
2. Աստուծոյ Թագաւորութիւն, Ո՞վ կը կառավարէ ներկայ Աշխարհը
3. «Այս Յիսուսը Որ Երկինք Համբարձաւ, Օր մը Դարձեալ Պիտի գայ Այնպէս՝ Ինչպէս Անոր Երկինք Երթալը Տեսաք»
4. Երկնագեղ Ենթափորձ (rehearsal)
5. Արդարութիւն և Իրաւունք
6. Միրոյ Տրամաբանութիւնը

WHAT DOES IT MEAN THE KINGDOME OF GOD OR THE KINGDOME OF HEAVEN

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

2009

ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԴԷՄ ԱՇԽԱՐՀԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Մարդու յայտնագործումէն ի վեր, իջխանութիւններ վարչակարգեր և թագաւորութիւններ հիմնարկուած են աշխարհի վրայ: Բաղաճական սոյն բոլոր կազմակերպութիւնները, որքան ալ մարդասիրական և գաղափարական նպատակներու ձգտած ըլլան, նոյնքան և աւելի, իրենց գործադրութեան մէջ, դարձած են անկարեկիր և վայրագ հանդէպ թէ՛ իրենց ցեղակիցներուն և թէ՛ այլ ազգերուն:

Պարսկական, հելլենական և հռոմէական ժաւաղապաշտ քաղաքակրթութիւնները, որքան որ եղած են շինարար, գիտահետազօտական և արուեստագիտական, դարձած են նաեւ արդի, անգութ ու եղեռնագործ:

Միջնադարեան զարթօնի դարաշրջանը, իր սիտան արուեստագէտներով ու հանճարեղ երաժշտագէտներով հանդերձ, նահանջած է ու պատճառ դարձած եւրոպայի երեսուն տարիներու անողոճ եղեռնին: Սպանիական հզօր պետութիւնը, Յիսուսի սիրոյ Աետարանին մականով, գերեվարած է Ամերիկաներու միլիոնաւոր բնիկ ժողովուրդները և անխնայ ջարդած զանոնք ասպատակելով ու կողոպտելով բնիկ ժողովուրդին ոսկին, արծաթը և հողագուրկ դարձուցած երկրին բնակիչները:

Ֆրանսական Յեղափոխութիւնը, նախապատճառը՝ բոլոր արդի ըմբոստութիւններու, սկսաւ աննախընթաց սուրբ և նուիրական կարգախօսութեամբ.

«Ազատութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն»:

Մինչդեռ իրականութեան մէջ, ստեղծեց գլխատումի գեհեճական (կիլոթին) դրութիւնը, որու բազինին անհամար ազնուական ու մտաւորական անմեղներ և անպարտներ, կորսնցուցին իրենց գլուխները:

Զսաներորդ լուսաւորեալ և գիտական դարը ականատես եղաւ Բասմենցուցիչ երեք քաղաքական փիլիսոփայութիւններու՝ համայնավարական, նացցիական և ֆաշիստական: Այս երեք անուանապէս ժողովրդավարական իջխանութիւնները անմիջապէս որդեգրեցին աստուածընդդէմ բիրտ քաղաքական բռնակալութիւն մը: Ստալին-

եան համայնավարութիւնը սովամահ ըրաւ տասը միլիոն իր հայրենակից ու հրանացիները և սպաննեց տասը միլիոն ուրիշներ Միպերիոյ ձիւնապատ ամալի լուրթեան մէջ:

Ստալինեան անգութ համայնավարութեան 30 տարիներու ընթացքին, աւելի հակա-հրիստոս հալածանքներ տեղի ունեցան Ռուսիոյ մէջ քան 300 տարիներու անողորմ հռոմէական դարաշրջանին, ուր Քրիստոնեայ հաւատացեալներ դաժանօրէն գլխատեցան, գազաններու կեր եղան ու անխնայ ջարդուեցան:

Նոյնանման եղեռնի ու մարդաջնջումի քաղաքականութեան հետեւեցան աշխարհի մնացեալ թագաւորութիւնները երբ հուշակեցին Համաշխարհային երկրորդ արիւնահեղ պատերազմը, որուն մեհեանին զոհ դարձան 52 միլիոն մարդկային մտածող, զգացող ու երազող երիտասարդներ:

Երկու տասնեակ դարեր առաջ յայտնուեցաւ երկնային Պատգամաւոր՝ Յիսուս: Ան սիրեց ու ողորմեցաւ տառապող մարդկութեան: Ախտածէտ ազգայնամոլութեան հակընդդէմ, Ան բարձրաբարբառ քարոզեց սիրոյ համազգայնութիւնը և Աստուծոյ շնորհը, որ պիտի փրկէ մարդկութիւնը:

Զօրապաշտական մարտակոչի և ռազմաշունչ քաղաքականութեան փոխարէն, Ան ցոյց տուաւ կարեկցութիւն և գթութիւն, քարոզելով, ճառելով, ոգեկոչելով ու ներշնչելով աննահանջ պայգարի **Միքոյ** կարգախօսը:

Հին Կտակարանի.

«Ակռայի տեղ ակռայ և աչքի տեղ աչք».

Մարգարեաշունչ մուշկ պատուերին փոխարէն, Լուսահանդերձ Գալիլեացին արջալոյսեց մեղմանուշ քաղցր ձայնով. **«Միքեցե՛ք ձեր թշնամիները»** անյիշաչար սիրոյ պատգամը: Ի վերջոյ, Ի՛ր իսկ Արիւնով կնիեց Իր վկայախօսի ապրումը, աղերսելով Իր Հօր. **«Հա՛յր, ներէ՛ ատոնց, վասնզի չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»:** Հրեայ ժողովուրդին, կրօնամոլ ու ազգայնամոլ քահանաները սխալ ըմբռնած էին զԱստուած ու կոչած զԱյն.

«Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածը»

փոխանակ վկայելու Ձիւն որպէս տիեզերական Աստուած և Հայրը համայն մարդկութեան: Իրենց աստուածճանաչումը շահավաճառութեան դարձուցած էին կողոպտելու այլ ազգերը, ու տիրապետելու աշխարհը ի նպաստ իրենց փառքին և հարստութեան:

Այլ խօսքով, աշխարհ չէր կրնար բարեկարգուիլ մարդկային գաղափարախօսութեամբ, որովհետեւ դիւանագիտական ջարժա-
ռիթմները ապականած և վատասերած էին մարդոց մտայնութիւնը:
Մարդկային հոգեկան և իմացական ենթահողը անձնասիրական և
անհանդուրժողական դարձած էր իրմէ տարբեր մտածողներու
հանդէպ:

**«Մարդոց սրտին խորհուրդներու ն բոլոր գաղա-
փարները միայն չար էին ամէն օր»--Մանդոց Զ. 5:**

Յիսուս մարմնացաւ հրեայ ազգայնամոլ ժողովուրդի խաւարա-
կուռ ծոցը, սակայն չ'իւրացուց անոնց *Յակոբ նահապետին*
կանխակալ սովորութիւնները և նախապաշարումները: Յիսուս հրա-
պարակեց և հոչակեց «Աստուծոյ *Երկնայի՛ն Թագաւորու-
թիւ նր»* ուր ազգային ծայրայեղ մոլեռանդութիւն չի կայ, այլ՝
անոր փոխարէն կայ սիրոյ, կարեկցութեան, արդարութեան և
համամարդկային ներդաշնակութիւն և համարդութիւն:

Յիսուս որպէս արթնամիտ ու սրամիտ շարցաբննիչ, հարցու-
փորձի ենթարկեց հրեայ կղերականութիւնը շուարումի մատնելով
զանոնք թէ ինչպէ՞ս Քրիստոս Դաւիթի *որդի* կրնայ կոչուիլ, երբ
Դաւիթ Թագաւոր Զայն «իր *Տէրը»* կը դաւանի: Յիսուս՝ Իր
կանխագիտական ջնորհին միջոցաւ ջանաց Իր ազգակիցներու
մտածումին և ըմբռնումին մէջ ներմուծել *Ճշմարիտ Արմաշութեան*
գաղափարախօսութիւնը, որուն կենդանի ու կենարար Թարգմանն ու
Առաքեալն էր Ինք:

Աշխարհի բոլոր պետութիւնները փորձած էին կառավարել
մարդկութիւնը, սակայն փոխանակ ըլլալու բարերար ու պարծանք
ցաւատանչ մարդկութեան, դարձած էին դահիճներն ու սարսափը
թէ՛ իրենց ցեղակիցներուն և թէ իրենց գերեզմարած ժողովուրդ-
ներուն: Հրեայ կրօնապետական վարչակարգը նոյնպէս անբասիր և
անպարսաւ չէր սոյն դատապարտութենէն, ինչպէս կը վկայէ Յիսուս.

«Վա՛յ ձեզի, դպիրներ ու կեղծաւոր փարիսեցիներ, որ
ծով ու ցամաք կը ջրջիք մէկ հատիկ նորադարձ ջահելու
համար, և երբ գտնե՛ք, ձեզմէ կրկնապատիկ աւելի գեհե՛նի
որդի կը դարձնե՛ք զայն»--Մատթ. ԻԳ. 15:

Աստուած՝ Երկնաւոր Հայրը, որ հողն ու կաւը, անբանն ու
անզգայնութիւնը աստուածակերպ մարդ արարեց, և ուղղեց անոր
սեւեռումը դէպի երկինքն ու աստղերը, որպէսզի ան համագործակ-

ցութեամբ Իր հետ, դառնայ նաեւ *աստուածանի/ան*՝ Սակայն այսօր, խաբէքաներ, ստախօսներ և չակերտուած անուանական Զրիստոնեաներ կը ջանան աստուածակերպ մարդ արարածը դարձնել իրենցմէ կրկնապատիկ գեհեհի որդի:

Ազգայնամոլ և հպարտ մարդ արարածը և գերեվարելու հեշտամոլ մղումներէ արբեցած պետութիւնները, ի վերջոյ տեղի պիտի տան Երկնային սուրբ Աստուծոյ Թագաւորութեան: Յիսուս, որպէս այդ Թագաւորութեան Դեսպան, աշխարհ եկաւ աւետելու համամարդկային **արդա՛ր** վարչաձեւը և կոչեց զայն **«Աստուծոյ կամ Երկնային Թագաւորութիւն»**: Այն ինչ որ Պղատոն իր *Հանրապետութիւն* խորհրդածուլթեամբ, ու Սովսէս Օրէնսդիր՝ իր ընտրեալ ժողովուրդով չկարողացան կերտել, Յիսուս Ի՛նք հաճեցաւ անձամբ գալ ու մարդկութեան յայտնել Իր անձնագործ սիրովը հիմնարկել Աստուծոյ Թագաւորութիւնը: Յիսուս Իր առաջնահերթ առաքելական Բարոզչութիւնը սկսաւ **«Աստուծոյ Թագաւորութիւնը մօտեցած է»** յայտարարութեամբ:

«Ժամանակը լրացած է և Աստուծոյ արժայութիւնը հաւած է ապաշխարեցէ՛ք և հաւատացէ՛ք Աւետարանին».

--Մարկ. Ա. 15:

Վերոյիշեալ իսուֆերուն մէջ, ընդհանրապէս, մեր ուշադրութիւնը կը գրաւեն, *ապաշխարել* և *հաւատալ* բառերը: Սակայն ինչո՞ւ անտեսել **«Աստուծոյ Արժայութիւն»** բառերը: Ինչո՞ւ հաւատալ միայն Աստուծոյ և Անոր գոյութեան, ու չհաւատալ Աւետարանի **«Աստուծոյ Թագաւորութեան»**, (Երկնային Բաղաճական նոր վարջա- ձեւ)-ին եւս:

Ինչո՞ւ Յիսուսի Մարդեղութեան անվեհեր Բարոզչութիւնը և աննահանջ գոհաբերումը վերագրել միայն անհատակա՛ն փրկագործութեան և եկեղեցական միաբանութեան կառուցման: Ու ոչ նաեւ համաշխարհային ազատագրութեան:

Այո՛, Յիսուս եկաւ փրկագործելու անհատներն ալ, ինչպէս խաչեալ աւազակն ու խաչգամող հոռմէացի հարիւրապետը, Անտակ Որդին ու կորուսեալ գառնուկը: Սակայն Յիսուսի առաջնահերթ առաքելութիւնը, յայտնաբան-Թարգմանն ըլլալ էր համամարդկային **ՆՈՒ** Պետական Վարչաձեւի:

Թէեւ 20-րդ դարու կարգ մը Բարոզիչներ՝ Յիսուսը (salvage operator) դարձուցած են, որպէս Փրկիչը Բանի մը ողորմելի մեղաւոր անհատներու, ուրանալով ցաւատանչ աշխարհի տառապակոծ **համա՛յն մարդկութիւնը**: Յիսուս յաերժօրէն միջագ-

գային է և համամարդկային: Նոր Վարչաձեւի ու Բաղաճակնային իշխանութեան մը այգալոյսող Աւետաբե՛րն է Ան: Լուսաւորե՛նք մեր մտքերը ու կարդա՛նք միասին Յիսուսի գրաւականը Եսայեայ մարգարէութեան մէջ, որ կ'ըսէ.

*«Տիրոջը հոգին իմ վրաս է, ասոր համար իսկ օժեց զիս և դրկեց՝ աղփատելու և աւետարանելու, (սրտաբեղ հոգիները բժշկելու), գերիներու ազատութիւն և կրօններու և տեսութիւն և Բարոզելու, հարստահարուածները ազատ արձակելու և Տիրոջը **ջնորհաբեր տարին հուշակելու»**--Ղուկ. Դ. 18-19:*

Վերոյիշեալ ազատագրութեան և անկախութեան բառերը որքա՛ն նման են հայրենիքի համար մաքաւոր մտաւորականներու բառացուցակին: Հայ Ֆետայիներ կ'ազատագրէին կարգ մը բռնաբարուած կիներն ու հարստահարուած գիւղացիները, որովհետեւ իրենց աննահանջ պայքարի կարգախօսը՝ ստեղծել էր **Հայ** **Պետականութիւն** և ազգային հայրենիք: Ա՛յս է նաեւ հայ Բրիտանացիին հաւատքի տինամիզմը: Իրագործենք մեր առօրեայ հաւատքին նուիրումը, սակայն սեւեռուած պահենք մեր աչքերը ծիածանագեղ հորիզոնին, որ է մեր համամարդկային ու եղբայրական յոյսն ու ազատութիւնը: Ունկնդրե՛նք անվեհեր Բարոզիչ ու Եկեղեցակառոյց ճարտարապետ Պօղոս Առաքեալին որ կ'ըսէ.

«Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած եմք՝ Զրիստոսի վրայ՝ ողորմելի եմք Բան քոյոր մարդիկ»--Ա. Կորն. Ժե. 19:

Մարդկութիւնը սիրող և մահը յաղթահարող Յիսուս՝ Պատասխանն է մարդու *անբողջակա՛ն* կարօտութեան: Նիւթական, ազգային, մշակութային և հոգեկան բաղձանքներուն: Յիսուս չեկաւ փրկելու և ներելու միայն մարդոց մեղքերը, այլ զանոնք նոր Վարչաձեւի--Աստուծոյ Թագաւորութեան Բաղաճակներ կերտելու համար, որպէսզի ապրին արդարութեամբ և իրաւունքով:

Միասին ուսումնասիրենք կարգ մը յուսադրիչ հաստուածները մեզի մարմնակից և պատկերակից Գալիլեացի Մարգարէին.

- 1.--«Եկե՛ք, իմ Հօրս օրհնածները, ժառանգեցե՛ք աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած արքայութիւնը»--Մատթ. Իե. 34:
- 2.--«Մի՛ վախնար, փոքրիկ հօտ, որովհետեւ ձեր Հայրը հաճեցաւ տալ ձեզի Արքայութիւնը»--Ղուկ. ԺԲ. 32:

3.--«Եւ դուք էք որ իմ փորձութիւններու մէջ ինծի հետ մնացիք մինչեւ հիմա. եւ ես կ'ուխտեմ ձեզի,--ինչպէս որ իմ Հայրս ալ ուխտ ըրաւ ինծի հետ,--տալու Արքայութիւնը, որպէսզի ուսե՛ք ու իմե՛ք իմ սեղանէս արքայութեան մէջ»--Դուկ ԻԲ. 28-30:

4.--«Ամբողջ տիեզերքի թագաւորութիւնը մեր Տիրոջ և իր Քրիստոսինը եղաւ. և ան պիտի թագաւորէ ամէն բանի վրայ յաւիտեանս յաւիտենից»--Յայտ. ԺԱ. 15:

Անաւասիկ ճշմարիտ, իրական և հաւատարիմ Բաղաճական թանձրացեալ իշխանութիւն մը, ուր ոչ գեղծարարութիւն և ոչ դաւաճանութիւն պիտի ըլլայ: Ուր բոլոր խորհրդականները հաւատարիմ, արդար և սուրբ պիտի ըլլան:

Վերոյիշեալ թագաւորական վարչաձեւը ցնորական (utopian) արքայութիւն մը չէ: Իմաստասէրներ, օրէնսդիրներ և ալլազան կրօնապետներ ջանացած են իրագործել այս տեսլական իրաւակարգը, սակայն չարաչար պարտութիւն կրած: Տիեզերքի Արարիչ՝ Հայր Աստուած այս առանձնաշնորհը յանձնած է Իր Միածին Որդւոյն Տիտուս Քրիստոսի, որպէս Զօրավար և Ճարտարապետը իրականացնելու Երկնային Թագաւորութիւնը՝ նաեւ *երկրի՝ վրայ*.

«Ապա պիտի գայ վախճանը, երբ որ Ան (Տիտուս) տայ թագաւորութիւնը Աստուծոյ՝ Հօր ձեռքը, երբ որ կործանած ըլլայ բոլոր իշխանութիւնները և ամէն պետութիւն ու զօրութիւն, որովհետեւ Ան (Տիտուս) պէտք է թագաւորէ մինչեւ որ բոլոր թշնամիները դնէ Իր (Աստուծոյ) ոտներուն տակ: Վերջին թշնամին որ պիտի կործանի՝ մահն է. և Աստուած ամէն ինչ հնազանդեցուց՝ դնելով Անոր (Տիտուսի) ոտներուն տակ»--Ա. Կորնոզ. ԺԵ. 24-26:

Յունիս 27, 1988

Թորոնթօ

ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՐՈՒԹԻՒՆԸ

Ո՛Վ ԿԸ ԿԱԹԱՎԱՐԷ ՆԵՐԿԱՅ ԱՅԻԱՐԿԸ

1. «Եւ Սատանան ըսաւ Յիսուսի. «Զեզի պիտի տամ այս ամբողջ իշխանութիւնը և ասոնց փառքը, որովհետեւ ինձի տրուած է, և որուն որ ուզեմ՝ կու տամ զայն»--Ղուկ. Դ. 6:
2. «Մի՛ կարծե՛ք թէ եկայ խաղաղութիւն հաստատելու երկրի վրայ. չեկայ հաստատելու խաղաղութիւն, այլ՝ սուր. Բանի որ եկայ բաժնելու մարդը իր հօրմէն, և աղջիկը՝ իր մօրմէն, և հարսը՝ իր կեսուրէն»--Մատթ. Ժ. 33:
3. Հիմա՛ է այս աշխարհի դատաստանը, հիմա՛ է որ այս աշխարհի իշխանը (Սատանան) դուրս պիտի նետուի--Յով. ԺԲ. 31
4. «Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի հետ. կու գայ այս աշխարհի իշխանը՝ Սատանան, և ան իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի»--Յով. ԺԴ. 30:
5. «Եւ եթէ մեր Աւետարանը ծածկուած ալ է՝ ծածկուած է կորստեա՛ն մասնուածներու՝ այդ անհաւատներուն համար, որոնց մտերը այս աշխարհի աստուածը (Սատանան) կուրացուց, որպէսզի անոնց մէջ չծագի Բրիստոսի փառքի Աւետարանին լոյսը, Բրիստոսի՛ որ պատկերն է աներեւոյթ Աստուծոյ»--Բ Կորն. Դ. 3-4:
6. «Եւ դուք մեռած էիք ձեր մեղքերուն և յանցանքներուն մէջ, որոնց մէջ ատեն մը կ'ընթանայիք ըստ այս աշխարհի ընթացքին, ըստ օդի իշխանութեան իշխանին, այն ոգիին՝ որ այժմ կը ներգործէ ապստամբութեան որդիներուն մէջ, որոնց կարգին մենք ամէնքս ալ ատեն մը կ'ապրէինք մեր մարմնի կիրքերով և կը կատարէինք մարմնի ու մտքի ցանկութիւնները, և իրօք բարկութեան որդիներ էինք ուրիշներու նման» --Եփես. Բ. 1-3:
7. «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ. եթէ իմ թագաւորութիւնս այս աշխարհէն ըլլար՝ իմ սպասաւորներս անշուշտ կը կուռէին, որպէս զի Հրեաներուն ձեռքը չմատնուիմ. **բայց, արդ,** (հիմա) իմ թագաւորութիւնս այստեղէն չէ» --Յով. ԺԸ. 36:
8. «Իսկ մշակները, երբ որդին տեսան, իրենք իրենց ըսին. «Ա՛ս է ժառանգորդը, եկե՛ք սպաննենք զայն և անոր ժառանգութիւնը մենք սեփականացնենք»: Եւ բռնելով՝ զայն այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին: Արդ, երբ այգիին Տէրը գայ՝ ի՞նչ պիտի ընէ այդ մշակներուն»: Ըսին անոր. «Զարե՛րը չարաչար պիտի

ոչնչացնէ և այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք բերքը իր ժամանակին պիտի տան իրեն»։ Ասոր համար ալ կ'ըսեմ ձեզի, որ Աստուծոյ արքայութիւնը պիտի առնուի ձեզմէ ու պիտի սրուի այն ազգին, որ պտղաբեր պիտի դարձնէ զայն--Մատթ. ԻԱ. 38-44:

9. Յիսուս Ինք կը վկայէ ըսելով. «Արդ, **ոչ ո՛ր երկինք էլած է** բացի միայն անկէ, որ երկինքէն իջաւ. մարդու Որդին՝ որ երկինքն է»--Յով. Գ. 18:

10. «Զէ՛ք գիտեր թէ **սուրբերն են որ պիտի դատեն աշխարհը**: Զէ՛ք գիտեր թէ **մենք հրեշտակներն ալ պիտի դատենք**, ուր մնաց թէ՛ երկրաւորները»--Ա. Կորնթ. Զ. 2-3:

Արդեօք դո՞ւն ալ ընդհանուր մարդկութեան նման կը վախնաս ընդունելու ճշմարտութիւնը, որովհետեւ այդ ընելը պիտի ազդէ բու ազգականական, բարեկամական և ընկերային յարաբերութիւններուդ հանդէպ: Միթէ դո՞ւն ալ կ'ուզես Յիսուսի ջրջանին եղած փարիսեցիներուն նմանիլ, որոնք, «մարդոցմէ սրուած փառքը աւելի սիրեցին, քան Աստուծմէ սրուած փառքը»--Յով. ԺԳ. 43:

Բոլոր անոնք որոնք ճշմարտութիւնը ուղիղ կը փարոզեն կամ կը վկայեն եկեղեցիներէն կը վտարուին: «Այս աշխարհի աստուածը (Մասանան) կուրացուց, որպէսզի անոնց մէջ չծագի Զրիստոսի փառքի Աւետարանին լոյսը, Զրիստոսի՝ որ պատկերն է աներեւոյթ Աստուծոյ: Ոչ թէ մենք մեր անձը կը փարոզենք, այլ՝ Յիսուս Զրիստոս՝ Տէրը, իսկ մեզ՝ որպէս ձեր ծառաները, Զրիստոսի համար. որովհետեւ Աստուած է որ ըսաւ, «խաւարէն թող լոյս ծագի»։ որ ծագեցաւ ալ մեր սրտերուն մէջ Աստուծոյ փառքի գիտութեան լոյսին համար՝ ի դէմս Յիսուս Զրիստոսի»--Բ. Կորնթ. Դ. 4-6:

Այգիին մշակները փոխուեցան, իսկ այգի՛ն ուրիշ տեղ (երկինք չփոխարդուեցաւ) իր տեղը մնաց:

Փետրուար 26, 2001

Թորոնթօ

**“ԱՅՍ ՅԻՍՈՒՍԸ ՈՐ ԵՐԿԻՆՔ ՀԱՄԲԱՐՁԱԿ,
ՕՐ ՄԸ ԳԱՐՁԵԱԼ ՊԻՏԻ ԳԱՅ ԱՅՆՊԷՍ՝
ԻՆՉՊԷՍ ԱՆՈՐ ԵՐԿԻՆՔ ԵՐԹԱԼԸ ՏԵՍԱՔ”**

--Գործք Ա.11:

Ինչպես որ Յիսուսի Մարդեղութիւնը և կոյսէ մը Մարմնանալը մարգարէացուած դէպք ու եղելութիւն դարձաւ, նոյնպէս ալ իրողութիւն պիտի ըլլայ Անոր վերստին Գալը երկրի վրայ: Տէրունական աղօթքի սկզբնաւորութեան, ըստ Յիսուսի պատուերին, աջակերսները կ'աղօթեն. «Զու թագաւորութիւնդ **թող գայ. բու կա՛մբդ թող ըլլայ երկրի վրայ** ինչպէս որ է երկնքի մէջ»: Յիսուս կը պատուիրէ Իր աջակերսներուն, թէ ի՛նչ պարտ են խնդրել ամենէն առաջ: Ան կ'ըսէ. *«Խնդրեցէ՛ք նախ Անտուծոյ թագաւորութիւնը և իր արդարութիւնը, և այդ բոլորը աւելիո՛ւ պիտի տրուին ձեզի»*--Մատթ. 2. 33:

Բոլոր ա՛յն ազգերը որոնք ունէին հայրենասիրութիւն ու տեսիլք, համաջխարհային երկրորդ Պատերազմէն յետոյ, վերակառուցին իրենց բանդուած հայրենիքը և բոլոր եկեղեցիները: Նոյնպէս նաեւ Յիսուս երբ յաղթահարէ չարը, պիտի վերադառնայ այս աշխարհ վերաջինելու համար բոլոր այն բարոյական բանդումները ու նաեւ ֆիզիքապէս աւերակուած երկրագունտը, որովհետեւ այս աշխարհ կը պատկանէր Իրեն: Ի՛նքն էր Տէ՛րն ու ճարտարապետը այս աշխարհին:

Յիսուս Զրիստոս ոչ միայն պիտի վերակառուցանէ աշխարհը ֆիզիքապէս ու բարոյապէս, այլ պիտի յարուցանէ այն բոլոր նահատակ հաւատացեալները որոնք փակեցին իրենց աչքերը հաւատալով, որ օր մը իրենց Յիսուս Փրկիչը պիտի կանչէ ու յարուցանէ զիրենք գերեզմաններէն: Ան խոստացաւ բոլոր Իրեն հաւատացողներուն ըսելով.

«Ինչո՞ն կը զարմանամ. որովհետեւ պիտի գայ ժամանակ, երբ բոլոր անոնք որ գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն Անոր ձայնը և դուրս պիտի ելլեն. անոնք որ բարի գործերը ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք որ չար գործերը ըրած են՝ դատատանի յարութեան համար»--Յով. Ե. 28-29:

Օր մը երբ աջակերսներ հաւաքուած ու մտերմիկ խօսակցութիւն կ'ունենային Յիսուսի հետ, Պետրոս ըսաւ Յիսուսի. «Ահա

մեր ամբողջ ունեցածը ձգեցինք և հետևեցանք Քեզի. մե՞նք ինչ պիտի ըլլանք»: Յիսուս պատասխանեց.

«Երկրորդ Գալուստին երբ Մարդու Որդին իր փառքի աթոռին բազմի, դուք որ ինձի հետևեցաք՝ պիտի բազմիք տասներկու գահերու վրայ, դատելու համար Եսրայելի տասներկու ցեղերը: Եւ ով որ ձգեց տուն, եղբայրներ, բոյրեր, հայր ու մայր, ու զաւակներ և ագարակներ՝ Ինձի համար, հարիւրապատիկը պիտի ստանայ և յաւիտենական կեանքը ժառանգէ»--Մատթ. ԺԹ. 27-29:

Յիսուսի վերոյիջեալ հզօր և անփոփոխելի խօսքերն էին, որոնք քաջալերեցին հաւատացեալները նահատակուելու և հաւատարիմ մնալու իրենց Փրկչին և հաւատքին: Աբսորի ճանապարհին, ինչո՞ւ հայերը թողուցին տուն տեղ ու պապենական կալուած ու բալեցին դէպի տաժանելի մահ: Որովհետեւ անոնք հաւատացին Յիսուս Բրիստոսի խոստումին, թէ մեռելոց յարութենէն յետոյ, Յիսուս պիտի վերադարձնէ իրենց պապենական ագարակները աւելիով ու իրենց առեւանգուած ու թրքացած զաւակները պիտի դառնան հաւատքի:

Բրիստոնեաները կոյր հաւատքով չի նահատակուեցան, այլ իրենց հաւատքը դարձած էր տեսութիւն: Անոնք կը տեսնէին **“երկինքը բացուած”** ու իրենց ապագայի արեւաշող երջանկութիւնը իրենց Փրկչին խօսքերուն մէջ: Յիսուս նախաձայնած էր Իրեն հետեւողներուն.

«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, սակայն բաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»:

Պօղոս առաքեալ իր գլխատուելէն ու նահատակուելէն առաջ, կը գրէ Թեսաղոնիկէի Եկեղեցիի հաւատացեալներուն ու կ'ըսէ.

«Եղբայրներ՛ր, չեմ ուզեր որ անգէտ ըլլաք ննջեցեալներու մասին, որպէսզի չտխրիմ ուրիշներու նկատմամբ, որոնք յոյս չունին: Եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ՝ այդպէս ալ Աստուած ետ պիտի քերէ ննջեցեալները Յիսուսի միջոցով, անոր հետ» --Դ. 12: Պօղոս առաքեալ կը շարունակէ.

«Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Բրիստոսի վրայ՝ ողորմելի ենք բան բոլոր մարդիկ: Բայց արդ, մեռելներէն յարութիւն առած է Բրիստոս՝ ննջեցեալներու առաջին պտուղը:...Ինչպէս որ Ադամով ամէնքը կը

մեռնին, այնպես ալ Բրիստոսով ամէնքը պիտի կենդանա-
նան՝ իւրաքանչիւրը իր կարգին. Նախ Բրիստոս և ապա
Բրիստոսին պատկանողները՝ Իր Գալստեան ատեն. և ապա
պիտի գայ վախճանը, երբ որ ան տայ թագաւորութիւնը
Աստուծոյ և Հօր ձեռքը, որ կործանած ըլլայ բոլոր
իշխանութիւնները և ամէն պետութիւն ու գօրութիւն.
որովհետեւ ան (Յիսուս) պէտք է թագաւորէ մինչեւ որ բոլոր
թշնամիները դնէ Իր ոտներուն տակ: Վերջին թշնամին որ
պիտի կործանի՝ մահն է. և Աստուած ամէն ինչ հնազան-
դեցուց՝ դնելով Անոր ոտներուն տակ: Վերջին թշնամին
որ պիտի կործանի՝ մահն է,--Ա. Կոր. Ժե. 26:

Յիսուս ըսաւ Թովմասին. *«Ես եմ ճանապարհը և ճշմար-
տութիւնը և կեանքը: Այ ո՛ր Հօրը կու գայ, եթէ ո՛չ ինձմով: Եթէ
ճանչնայի՛ք զիս՝ պիտի ճանչնայի՛ք նաեւ իմ Հայրս»*.

*Եթէ Բրիստոնեայ առաջնորդները իրենց
կեանքին և ապրումի ընթացքին ցոյց տային
Յիսուս Բրիստոսի սէրը, համբերութիւնը, ողոր-
մութիւնը և անձ նազոհողութիւնը, աշխարհ
այսօր Բրիստոնեայ դարձած պիտի ըլլար:*

Սեպտեմբեր 29, 2000
Թորոնթօ

ԵՐԿՆԱԳԵՂ ԵՆԹԱՓՈՐՁ

(REHEARSAL)

Նիւթական կամ աննիւթական ամէն հաւաքական ձեռնարկ, ըլլան անոնք՝ նուագահանդէս, գօրահանդէս, մարզահանդէս կամ քաղաքական և գեղարուեստական, կ'ունենայ իր նախափորձը կամ ենթափորձը: Այս ենթափորձը կը կատարուի այն վայրին մէջ (թատերասրահ կամ մարզադաշտ), ուր տեղի պիտի ունենայ իսկականն ու պաշտօնական ներկայացումը:

Գեղարուեստական ենթափորձը կամ կառավարական նախափորձը ճշմարիտ ու հարազատ ներկայացումէն կը զանազանուի կարգ մը զգալի տարբերութիւններով:

ա.--Նախափորձի պահուն նուագահանդէսի ղեկավարը, երգիչները-- նուագողները--պարողներն ու աշխատաւորները, բոլորն ալ տեսնով դժուար կը զանազանուին իրարմէ, որովհետեւ ներկայ կ'ըլլան իրենց ամենօրեայ սովորական գործաւորի կամ քաղաքացիի անպաճոյճ զգեստներով:

բ.--Դերակատարումները տեղի կ'ունենան յաճախ անկանոն, և կարգ մը ելոյթներ կը կրկնուին իրենց անյաջողութեան պատճառով:

գ.--Պատահական է նաեւ որ ղեկավար առաջնորդը ոմանց գովասանքի ակնարկութիւն և ոմանց ալ յանդիմանական խօսք ուղղէ:

դ.--Փորձի ժամանակ՝ ակնքախ երեւոյթ է որ այդ հսկայ թատերավայրը ամայի և անարձագանգ ըլլայ, կարծես յուսահատութիւն և բարոյալքում յառաջացնելու դերակատարներուն մօտ:

ե.--Տխուր զգացողութիւնը և վհատեցուցիչ տեսարանը իրենց լրումը կը գտնեն՝ երբ յոգնած ղեկավարը կը գեկուցէ բոլոր մասնակցող ծարաւած մարզիկներուն կամ արուեստագէտներուն՝ երթալ տուն առանց քաջալերական որեւէ ծափահարութեան արժանացած ըլլալու հազարաւոր հանդիսատեսներու կողմէ:

Տխուսի Մարդեղացումը, Առաքելութիւնը, Յուդային Մատանայական համբոյրը, և Պետրոս աջակերտին ուրացումն ու Տխուսի Խաչելութիւնը, ապա յաղթական Յարութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութեանը յայտնագործումին երկնաշունչ նախափորձն էր, որ տեղի ունեցաւ երկու հազար տարիներ առաջ այն երկրագունդ թատերաբեմին վրայ, ուր գործող հաւատարիմ վկաներ մահացան բաց աչքերով, ոմանք՝ գազաններէ յօշոտուած ու ոմանք՝ ալ՝

սրախողխող:

Յիսուս՝ դրդազին պատգամներով չմօտեցաւ հառաչող մարդկութեան: Իր ձայնին մէջ ան ու սարսափ չկար, այլ՝ սէր, կարեկցութիւն ու ներում մեղքերու:

Տառապեալ մարդոց դպչելու Իր մարդակենցաղ բնութեան պատճառով,

«Անհկա կերպարանք կամ վայելչութիւն չունէր, որպէսզի Անոր նայէինք: Այլ ալ այնպիսի երեսոյթ մը որպէսզի Անկէ ակորժէինք: Անհկա մարդոցմէ անարգութեամբ ու երեսէ ձգութեամբ: Վիշաբրու տէր ու ցաւերու տեղեակ եղաւ»--Եսայ. ԾԳ. 2-3:

Երկնաստիպ նախափորձի համար՝ Յիսուս ոեւէ Գալիլեացիէ մը չէր զանազանութիւն որովհետեւ.

«Եկաւ Մարդու Արդին, կ'ուտէ ու կը խմէ, և կ'ըսեն. ահա ուտող և խմող մարդ մը, բարեկամ՝ մաքսաւորներու և մեղաւորներու.»--Մատ. ԺԱ. 18:

Իրեն ժամանակակից հոգեւորականներն ու եկեղեցաւեր իշխանները ոչ միայն Ձինք չզնահատեցին, այլ ջանացին Ձինք թակարդելու հակաճումեացի ներկայացնել յաջս օրուան կառավարութեան: Յիսուս այն աստիճան մարդեղինացած ու նման էր Իր հե՛ք աջակերտներուն, որ Յուդա որպէսզի զատորոջէ Վարդապետը իր ընկեր-աջակերտներէն--համբոյրի մը նշանով մատնեց Ջայն:

Յիսուսի հաւատարիմ ուխտաւորները, որոնք երկնածին արջալոյսին՝ կոչութեան **Եկեղեցի**, նման իրենց երկնահայեաց Աեկավարին աւետարանեցին ու Բարոզեցին և դարձան հարազատ արտայայտիչները և թարգմանները իրենց Զրիստոսին: Միակ որոտագին ծափն ու գոչումը որ լսեցին, իրենց հանդիսատես դահիճներու վայնասունն էր:

Բոլոր այս դէպքերը եղան ու աշխարհ սխալ հասկցաւ իր Ազատարար Փրկիչն ու Անոր երկնընտիր առաքեալները, որովհետեւ երկնաշաւիղ ըմբռնումն ու հասկացողութիւնը կը պահանջէ *տուիրում, անէ տուրացութիւն և անկեղծ ինքնաճանաչում.*

Տասներկու երկար տարիներ սահած էին ու Հայոց Տրդատ թագաւորը դեռ ինքզինքին չէր եկած: Կոյսերու և Յիսուսի հաւատարիմներու անմոռնչ արիւնն էր որ խօսեցաւ Տրդատ թագաւորի ներաշխարհին: Ու հայ ցեղին թագաւորը դարձաւ առա-

ջին արքան որ ողջունեց Յիսուսն ու Անոր Ուխտը ոչ միայն իր ընտանիքին, այլ ամբողջ ազգին համար:

Տասներեք տարիներու անխօս տառապանքի ու ցաւի լեզուով Ա. Գրիգոր Պահլաւունին վկայեց ու Տէր Յիսուս դարձի բերաւ դէւերու գերին եղած Տրդատ Թագաւորը, ու զայն դարձուց Իրեն հաւատացող Աւետարանի Ռեհվիրան: Ա. Գրիգոր Լուսաւորիչ ու իր ընկերակից Թագաւորը կրցան *«տեսնել աղօտ՝ ինչպէս հայելիին Մէջ»*, ու հաւատով և աստուածային ջնորհով վստահ եղան տեսնել Յիսուսը «Երես առ երես», որովհետեւ այդ պաշտօնական տօնախրմբութեան ու երկնագեղ զօրահանդէսին:

*«Պիտի ճանչնան Զայն այնպէս՝
ինչպէս որ Ան ճանչցաւ զիրենք»:*

**Օգոստոս 19, 1988,
Թորոնթօ**

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ

Ինչպե՞ս փաստել և հիմնել այս դաժան ու անողոք աշխարհի վրայ, արդարութիւն և իրաւունք ու մարդոց մէջ հաճութիւն: Եւսի քան ճառելու «Արդարութեան և Իրաւունք»ի մասին, Բննենք թէ այս բաները ի՞նչ կը նշանակեն իրենց իսկութեան մէջ:

«Արդարութիւն» բառին արմատն է «արդ» որ կը նշանակէ «ձեւ, կարգաւորութիւն և սարք»: Այս արմատ բառը գործածական է արիական, հայ, յոյն, լատին և գերմանական ընտանիքներու լեզուներու մէջ: Ինչպիսի են եւրոպական լեզուներու մէջ գործածուած (Art) բառը որ կը նշանակէ, **«ձեւ, եղանակ, տեսակ և կերպ»**: Ձեռքի և մտքի հնարամտութիւն, արհեստ, ճարտարարուեստ, ձեռագործ և գեղարուեստ բաները:

«Ձեւական կարգաւորումը և նիւթական ուղղութիւնը երբ **բարոյակա՞ն** մտքով ըմբռնուի, կազմուած կ'ըլլայ **արդար** բառը -- չր. Աճառեան:

«Իրաւունք» բառին արմատը կը գտնուի «իր» բառին մէջ որ կը նշանակէ «բան, մի բան»: Այսինքն փոխանակ **ոչ ոչ ու թեան** կը գտնուի և գոյութիւն ունի մի բան: Որմէ կը սերին *իրագէտ, իրագգած, իրագեղ, իրողութիւն, իրագոյրծել* բաները: Իրածել՝ *«խոյսնիլ»*, իրել՝ *«խոյսնըրդածել»*: «Իր» բառի գործիական հոլովն է՝ *իրաւ* որ կը ստանայ «արդեամբ, գործով և հաւաստեալ» նշանակութիւնը:

«Իրաւ» - ի գործիական ձեւը իբր գոյական առնուելով՝ «իրաւունք, դատաստան և արդարութիւն» նշանակութիւնը կը ստացուի: Որմէ կը սերին *իրաւագէտ, իրաւագիտութիւն և իրաւախոտ* բաները»-- չր. Աճառեան:

Ի՞նչ վեհիմաստ, խորթափանց և յաւերժաւանդ բաներ: Երբ դիտենք **արդարութիւնն ու իրաւունքը** արուեստի՞ դիտանկիւնէն, օրէնքի և բարոյականի դիտանկիւնէն, մարդկութիւնը որքա՞ն հեռու մնացած կը գտնենք:

Բարբարոս, վայրագ և բիրտ մարդկութիւնը ինչպե՞ս կրցած է մտայղանալ արդարութեան, իրաւունքի և գեղեցիկի վեհ գաղափարները: Մարդկային այս զգացողութիւնը ինքնի՞ն հրաջքներու մեծագոյնը պէտք է սեպուի: Աստուածային այս հոգեյղացումը, որ

կարելիութիւնը կ'ընծայէ մարդու անձնաւորութեան մէջ ընձիւղել, արմատացնել քաղցր **արդարութեան** և **իրաւունքի**, որ ինքնին մեծասքանչ և յուսադրիչ զօրութիւն մը կը ներկայացնէ:

Կաւելէն մարմնաւոր էակը ինչպէ՞ս ստացած և իւրացուցած է «արդարութեան, իրաւունքի և գեղեցիկի» գաղափարը: Ճնշաւոր փոջին միթէ բազմադարեան հոլովոյթո՞վ կամ կայծակնափայլ որոտումներու գոչումէ՞ն ստացած է ոգետեսիլ սոյն ճշմարտութիւնները ու երկնային իղձերը, որոնք իր ինքնութեան մէջ կը բողբոջեն քաղցր արդարութեան և իրաւունքի:

Մայր բնութեան այս կաւելէն մատեանը, արդեօք հպո՞ւմն ունեցած է տիեզերքի ճարտարապետ ու կեանքի վեհագոյն Իրականութիւնը եղող Աստուծոյ: Խօսուն հողեղէնն ու փշածին բնութիւնը, ինչպէ՞ս իր անզգամ անդամները դարձուցած է աստուածաբնակ, աղօթարան և երկնապաղ ֆրաշակերտութիւն:

Աստուածային ներգործութիւնը դարդար չի ճանչնար: Երբեք թող չկարծուի թէ Աստուած Իր արարչագործութենէն յետոյ քաջուած է ստեղծագործ ասպարէզէն: Աստուածութիւնը՝ **ստեղծագործութիւն է** և Ինքնին: Ան է յախտնական Արեւալոյսը, ֆրաշքներու համատարած Զօրութիւնն ու տիեզերական Սէրը:

Եւայածին մարդու ներկայ կեանքի դարաջրջանը, փորձանական ժամանակամիջոցն է, ուր Աստուած ունայնաբոյս մարդը կը կահաւորէ ողորմութեամբ, սրբագործուած հասկացողութեամբ, արդարատենչ կամֆով և իրաւակշիռ ու ճշմարտարար հոգիով:

Աստուածութեան գերագոյն կատարը, մարդ արարածը կերտել է ոչ միայն Իր **կերպարին** նման, այլ առաջնորդել է զայն նաեւ Իր **նմանութեան** (նկարագրին): Աստուածային այս նմանութեան մէջ պիտի կատարուի «Աստուծոյ Թագաւորութիւն»ը որուն համար, Յիսուս մեր Տէրը, պատուիրեց մեզ աղօթել, ըսելով.

**«Եկեսցէ արքայութիւն քո,
եղիցին կամք քո որպէս յերկինս՝ և յերկրի»:**

Երկնային Թագաւորութեան արդար և իրաւարար իշխանութեան որպէս բաժակաճառ՝ Յիսուս կը խոստանայ, ըսելով.

**«Կ'ըսեսձեզի, թէ ասկէ վերջ որթի բերքէն
պիտի չխմես, մինչեւ Աստուծոյ
արքայութիւնը գայ»** -- Դուկ. ԻԲ. 18:

Արդարութեան և իրաւունքի կարօտագին այս քաղցր ոչ թէ՛

համաշխարհային է ու համազգային, այլ՝ նաեւ անհատական: Արդարութեան և իրաւունքի սովահար մարդկային ընկերութիւններ և անհատներ, որոնք կողոպտուեցան ու թալանուեցան, սպանուեցան ու նահատակուեցան ոչ թէ ստացած են իրենց արդար իրաւունքները, կամ կը ստանան ներկային իրենց *զաւակներու* է միջոցաւ, այլ՝ իրենք որպէս նահատակուած ու անիրաւօրէն սպանուածներ պիտի յանձնեն այն յաւիտենական Արեւալոյսին, աստուածային արդարատենչ կամօք:

Արդարութիւնն ու իրաւունքը ո՛չ անցեալի դարերուն գոյ էր ու ոչ ալ ներկայ 20-րդ դարուն, այլ՝ անվրէպ ու անկասկած որպէս հրաշքներու համատարած գօրութիւն ու ապաւինողներու յո՛յս, պիտի ճառագայթէ արդարութեան և իրաւունքի համբուրո՛ղ Այգալոյսը այն բոլոր նահատակներուն, որոնք նուիրեցին իրենք զիրենք Աստուծո՛յ Թագաւորութեան:

Գրուած, Սեպտ. 27, 1988
Թորոնթօ

ՍԻՐՈ՛Յ ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ

Կան մարդիկ, որոնք կը տրամաբանեն վախի՛ պատճառաւ, ուրիշներ՝ ազահութեան և անձնասիրական շարժառիթներով: Ծնչաւոր կենդանիներն անգամ կը տրամաբանեն, սակայն սահմանափակ չափով: Ծուն մը երբ կը զանազանէ իր տէրը՝ թշնամիէ մը, գործածած կ'ըլլայ *ի/չ* տրամաբանութիւնը: Սակայն շուն մը չի կրնար իր տրամաբանութեամբ զանազանել *բարոյակա՛ն*, առափնութիւնը, գոեհիկ կենցաղավարութենէ: Ընտանիքի մը շատ սիրելի շունը՝ չի կրնար զանազանել գեղեցիկը տգեղէն:

Ուստի, *ի՞նչ է տրամաբանութիւնը:*

Տրամաբանութիւնը՝ ուղիղ դատելու հոգեկա՛ն կարողութիւնն է: Տրամաբանութիւնը ուղիղ մտածելու, արդարութիւնը և բարին հետազօտելու գիտարուեստն է:

Մարդկային տրամաբանութեան ասպարէզը այնքան տարածուն է, որ այս գրութեամբ կը փափափինք բաւարարել մենք զմեզ միայն *"Միրոյ՛ Տրամաբանութեամբ"*:

Ինչո՞ւ "Միրոյ Տրամաբանութիւն"ը:

Մարդ արարածը որքան որ տենչացող մըն է հոգեկանին և աննիւթականին, հոն հասնելու յոգնութիւնը չուզէ՛ր ստանձնել: Այլ խօսքով, բազմաթիւ անուանեալ Քրիստոնեաներ, կը պաշտպանեն Եկեղեցին, նոյնիսկ նուիրատուութիւններ կ'ընեն, սակայն չեն յաճախեր եկեղեցի: Ծատ մը հաւատացեալներ կը փառաբանեն զԱստուած, սակայն չե՛ն հաւատար Աստուծոյ...:

Որովհետեւ տրամաբանութիւնը *հոգեկա՛ն* կարողութիւն է, չի կրնար լման գործել եթէ ազահութիւնն ու անձնապաշտութիւնը ապականեն հոգիին սրբութիւնը: Մարդ արարածը յարատեւօրէն ներջնչումի արբեցութեան ներքեւ չ'ապրիր, ոչ ալ շարունակ "Պայծառակերպութեան" յափշտակիչ լերան կատարը կը բնակի: Մարդ՝ բնականէն հողաջէն է: Մտուեր է մարդ միայն, ան կը ծաղկի, սակայն չի պտղաբերիր: Անոր մղումները աւելի զօրաւոր են քան զգացումները: Աւելի դիւրաւ կը գահավիժի մեղանչում և կործանում քան թէ կը խոյանայ երկինք:

Մարդ՝ աշխարհի բարձրագոյն տրամաբանող էակն է, սակայն անոր տրամաբանելու զօրութիւնը կ'աղօտի հետեւեալ ախտանշաններէն ազդուած՝

- ա. **Տգիտութիւն**
- բ. **Անգթութիւն**
- գ. **Ազատութիւն և**
- դ. **Փառամոլութիւն**

Վերոյիշեալ սրբապօղոթիւններն ու հոգեկան անմաքանութիւնները երբ ապականեն ենթական, այդ անձը, ինք իրեն համար, բոլոր տրամաբանած ու դատած հարցերը արդար և ուղիղ կը տեսնէ: Որովհետեւ իր տրամաբանութեան տեսութիւնը վերոյիշեալ չորս դիտանկիւններէն կ'առաջնորդուի:

Հաւատուրաց կրօնաւորներ երբ խաչեցին Յիսուս Քրիստոսը, ոչ թէ միայն զեղջի չեկան, այլ՝ ըստ իրե՛նց տրամաբանութեան, արդարութի՛ւնը գործադրած եղան: Անոնց տրամաբանութիւնը Օրէնքի տառէ՛ն և իրենց փառամոլութեան դիտանկիւնէն կը սեւեռէր:

Ինչո՞ւ աշխարհի մէջ ընդհանրացած է ամուսնալուծումը: Ինչպէ՞ս երկու սիրավառ սրտեր, փոխանակ սիրելու զիրար, կը սկսին առե՛լ զիրար: Անցեալին երբ չէին ուզեր իրարմէ բաժնուիլ, այսօր իրարու աչքի՛ն անգամ չեն ուզեր նայիլ: Ոչ թէ տրամաբանութիւն չունին, այլ իրենց տրամաբանելու զգայարանը ապականած է: Անձնասիրութիւնն ու «ես»ի բնահաճոյքը պղտորած են անոնց դատողութիւնը:

Ինչո՞ւ նորաբողբոջ ազգեր, Ափրիկէի ցամաքամասին, զոհ գացած են ըմբոստութեան և ապստամբութեան:

Վերոյիշեալ ազգերը ոչ թէ ազգասէր չեն, այլ ազգասիրութիւնն ու ծայրայեղ **տնձնասիրութիւնը** իրարու հետ կը ջիոյթեն: Անոնք կ'ուզեն ծառայել ազգին, բայց նախ կը ստիպեն որ ազգը *հպատակի՛* իրենց, կը ջանան փրկել ազգը, զայն կոտորելով և գերեվարելով: Հետեւանք կ'ըլլայ սով, հիւնադութիւն և մահ: Այս պատճառաւ սովը միահեծան կը տիրապետէ Ափրիկէի մէջ:

Սիրոյ տրամաբանութիւնը չի **պարտադրեր** իր կամքը, այլ՝ կը **մատուցանէ՛** ինքզինքը: Սիրոյ ամենացայտուն դիմագիծը ակնայայտ է Գողգոթայի խաչեցեալին նայուածքին մէջ: Քրիստոսի չարչարակոծ դէմքը, սիրոյ մագնիսական ալիքներ կը ցայտէ համայն աշխարհի և մարդկութեան: Սիրոյ տրամաբանութեամբ, անձ մը իր կամքը չի՛ *բռնանայ*: ուրիշի, այլ՝ ինքզինք *կ'ընծայէ՛* անոր:

Ատելութեամբ ապականած տրամաբանութիւնը, մայրն է բոլոր չարիքներու, որոնք կը տեսնենք ու կը լսենք ամէն օր: Սիրոյ տրամաբանութիւնը ակնադիւրսն է բոլոր բարիքներու, հոգեկան

գոհացումներու ու ներդաշնակ ապրումներու:

Մի՛ խրատե՛ք անձ մը տրամաբանելու երբ անոր հոգին պղտորած է ասելութեամբ: Հոգին այն վառելանիւթն է որ շարժման մէջ կը դնէ տրամաբանութիւնը:

Տրամաբանութիւնը շարժող մղիչ զօրութիւնը, պէտք է հոսի սիրո՛յ գոհաբերական անձնուրացութենէն: Հոն ուր պարտադրա՛նք կայ, հոն ուր ճնշո՛ւմ կայ, հոն ուր ստիպում կայ, տրամաբանութիւնը չի կրնար գործել:

Հոգին ձեռ կամ չափ չ'ունի: Ան կ'ապրի ազատութեան, ու երկնակամարի միջոցին մէջ կը ճախրէ ամպանման երեւոյթներով: Նիւթին կրնաս տալ ձեռ, չափ և կշիռ, բայց ոչ երբեք հոգիին: Անասունները կրնաս պարտադրել բու կամֆիդ: Տալ անոնց ձեռ և չափ, բայց ոչ մարդ արարածին: Մարդ՝ կաւաջէն է, այո, սակայն շաղախուած է ու դարձած հոգիի ու հողի բաղադրութիւն:

Կրնաս մարդը գերեվարել, սակայն չես կրնար պարտադրել որ ան սիրէ՛ քեզ: Կրնաս նոյնիսկ սպաննել զայն, սակայն չես կրնար կալանաւորել: Զայն մի միայն կրնաս *ջահիլ*: Առինքնել զայն բու սիրովդ, և ի վերջոյ նոյնանալ անոր հետ բու անձնագոհութեամբդ: Յիսուս Զրիստոս չի պարտադրեց Սողոս Փարիսեցին, որ ան դաւնայ Իր առաքեալը: Մեր Տէրը սիրոյ հրապոյրով ջահեցաւ զայն ու դարձուց Պօղոս առաքեալի:

Հետեւեալը բիւրեղացեալ Սիրոյ տրամաբանութիւնն է.

«Եթէ խօսիմ մարդոց և հրեշտակներու ն լեզուները, բայց սէր չու նենամ, կը նմանիմ քղիսձի մը՝ որ կը հնչէ կամ ծնծղաներու՝ որ կը դողանջեն: Եթէ մարգարէութիւն ընելու ջնորհ ու նենամ և հասկնամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ու նենամ ամբողջ հաւատքը՝ մի նչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չու նենամ՝ ոչ ինչ եմ»--Ա. Կորնթ. ԺԳ. 1-2:

Դեկտեմբեր 31, 1990

Թորոնթօ